ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1424-Ա/2 «09» օգոստոսի 2023 թ.

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ» ՆԵՐԴՐՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման 34-րդ կետի պահանջները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Հանրակրթության պետական նոր չափորոշչով» պայմանավորված 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի 2023 թվականի օգոստոսի 7-ին հրավիրված 11-րդ ամփոփիչ նիստի ընթացքում ընդունված որոշումը:

8/9/2023

X

ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: MARTIROSYAN ARTUR 4110790255 **Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

/պարտականությունները կատարող/

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11/2023

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Հանրակրթության պետական նոր չափորոշչով» պայմանավորված 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի 2023 թվականի օգոստոսի 7-ին հրավիրված 11-րդ ամփոփիչ նիստի /ընթացքը ձայնագրվել է/

Հանձնաժողովի նիստի վայրը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ք.Երևան, Վ.Սարգսյան 3

Հանձնաժողովի նիստի սկիզբը՝ 2023 թվականի օգոստոսի 7-ին, ժամը 17:00

Հանձնաժողովի նիստին ներկա էին

Հանձնաժողովի նախագահ՝

1. Արաքսիա Սվաջյանը - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝

2. Վահրամ Գասպարյանը - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ /հանձնաժողովի անդամ գնահատող/

3. Թամարա Սարգսյանը - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանրակրթության վարչության պետ /հանձնաժողովի անդամ գնահատող/

4. Ստալ Սարդարյանը - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանրակրթության վարչության հանրակրթական և արտադպրոցական հաստատությունների համակարգման բաժնի պետ /հանձնաժողովի անդամ, բացող/

5. Թամարա Գյոզալյանը - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսաբյուջետային վարչության կրթական ծրագրերի ֆինանսավորման բաժնի պետ /հանձնաժողովի անդամ, գնահատող/

6.Կարինե Բաբայանը - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանրակրթության վարչության փորձագետ /հանձնաժողովի անդամ, բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝

7. Ռուզան Սաֆարյանը - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի

նախարարության հանրակրթության վարչության հանրակրթական և արտադպրոցական հաստատությունների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի նիստին բացակա էր Գոռ Գասպարյանը, ով ինքնաբացարկ է հայտարարել /շահերի բախում/:

Հանձնաժողովի նիստի օրակարգի հարցեր.

Հանձնաժողովի քարտուղարը հակիրճ ներկայացրեց նիստի օրակարգում ընդգրկված հարցերը՝ նշելով հարցերի քննարկման անհրաժեշտությունը:

Հարց 1. «ՀՀԿԳՄՍՆԴՄ-11000016» ծածկագրերով հայտարարված դրամաշնորհային մրցույթի արդյունքների ամփոփում:

Հարց 2. Հանձնաժողովը քննարկեց փորձաքննություն անցած դասագրքերի հեղինակների կողմից ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն մուտքագրված դիմումները և հաշվի առնելով այն հանգամանքը, որ դասագրքերի փորձաքննության գործընթացը կազմակերպվում է առաջին անգամ, որոշում կայացվեց վերոնշյալ դասագրքերը ուղարկել լրացուցիչ կարծիքի՝ գործընթացի օբյեկտիվության հարցը ապահովելու նպատակով:

Հարց 3. Հիմք ընդունելով փորձագիտական հանձնաժողովների կողմից գնահատման սանդղակի համաձայն՝ ներկայացված բովանդակային գնահատման փուլի և գիտական համապատասխանության վերաբերյալ գրավոր եզրակացությունները՝ հանձնաժողովի քարտուղար Ռուզան Սաֆարյանը ներկայացրեց ամփոփ տեղեկատվություն 10-րդ դասարանի դասագրքերի փորձաքննության արդյունքների վերաբերյալ և այն կազմակերպությունների, որոնց ստեղծած դասագրքերը հաղթահարել են սահմանված շեմը և հաղթող ճանաչվել, ինչպես նաև այն կազմակերպությունների, որոնց դասագրքերը հաղթող չեն ճանաչվել:

Մասնավորապես, 10-րդ դասարանի 22 անուն դասագրքերի համար ներկայացվել է 16 օրինակ դասագիրք:

10-րդ դասարան

«Հայ գրականություն» առարկայի դասագրքի ստեղծման հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝ «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ն, որի դասագիրքը գիտականորեն համապատասխանել է և հաղթահարել դասագրքի գնահատման համար սահմանված շեմը:

«Հանրահաշիվ» առարկայի դասագրքի ստեղծման հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝ «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ն, որի դասագիրքը գիտականորեն համապատասխանել է և հաղթահարել դասագրքի գնահատման համար սահմանված շեմը:

«Երկրաչափություն» առարկայի դասագրքի ստեղծման հայտ են ներկայացրել երեք կազմակերպություն՝ «Աստղիկ գրատուն» ՍՊԸ-ն, «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ն և «Զանգակ-97» ՍՊԸ-ն, որոնցից՝ «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ի և «Զանգակ-97» ՍՊԸ-ի դասագրքերը գիտականորեն համապատասխանության և գնահատման համար սահմանված շեմը հաղթահարել են, իսկ «Աստղիկ գրատուն» ՍՊԸ-ի դասագիրքը գիտականորեն համապատասխանել է պահանջներին, սակայն բովանդակային գնահատման համար սահմանված շեմը չի հաղթահարել:

«Անգլերեն» առարկայի դասագրքի ստեղծման հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝ «Զանգակ-97» ՍՊԸ-ն, որի դասագիրքը գիտականորեն համապատասխանել է և հաղթահարել դասագրքի գնահատման համար սահմանված շեմը:

«Աշխարհագրություն» առարկայի դասագրքի ստեղծման հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝ «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ն, որի դասագիրքը գիտականորեն համապատասխանել է և հաղթահարել դասագրքի գնահատման համար սահմանված շեմը:

«Հասարակագիտություն» առարկայի դասագրքի ստեղծման հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝ «Զանգակ-97» ՍՊԸ-ն, որի դասագիրքը գիտականորեն համապատասխանել է և հաղթահարել դասագրքի գնահատման համար սահմանված շեմը:

«Ֆիզիկա» առարկայի դասագրքի ստեղծման հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝ «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ն, որի դասագիրքը գիտականորեն համապատասխանել է և հաղթահարել դասագրքի գնահատման համար սահմանված շեմը:

«Քիմիա» առարկայի դասագրքի ստեղծման հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝ «Անտարես» ՍՊԸ-ն, որի դասագիրքը գիտականորեն չի համապատասխանել և հաղթահարել դասագրքի գնահատման համար սահմանված շեմը:

«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասագրքի ստեղծման հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝ «Աստղիկ գրատուն» ՍՊԸ-ն, որի դասագիրքը չի հաղթահարել դասագրքի գիտականորեն համապատասխանության և գնահատման համար սահմանված շեմը:

«Երաժշտություն» առարկայի դասագրքի ստեղծման հայտ են ներկայացրել երկու կազմակերպություն՝ «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ն և «Զանգակ-97» ՍՊԸ-ն, որոնց դասագրքերը

գիտականորեն համապատասխանել և հաղթահարել են դասագրքի գնահատման համար սահմանված շեմը:

«Կերպարվեստ» առարկայի դասագրքի ստեղծման հայտ են ներկայացրել երկու կազմակերպություն՝ «Զանգակ-97» ՍՊԸ-ն և «Անտարես» ՍՊԸ-ն: Դասագրքի գիտականորեն համապատասխանության և գնահատման համար սահմանված շեմը հաղթահարել է «Զանգակ-97» ՍՊԸ-ի կողմից ստեղծված դասագիրքը, «Անտարես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դասագիրքը գիտականորեն համապատասխանել է պահանջներին, սակայն բովանդակային գնահատման շեմը չի հաղթահարել:

«Բնագիտություն» առարկայի դասագրքի ստեղծման հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝ «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ն, որի դասագիրքը գիտականորեն համապատասխանել է և հաղթահարել դասագրքի գնահատման համար սահմանված շեմը:

«Հայոց լեզու», «Հայոց պատմություն», «Ռուսաց լեզու», «Ֆրանսերեն», «Գերմաներեն», «Համաշխարհային պատմություն», «Կենսաբանություն», «ԹԳՀԳ», «Ֆիզկուլտուրա» և **«Արվեստ»** առարկաների համար հայտ չի ներկայացվել:

Հիմք ընդունելով վերոնշյալ տեղեկատվությունը, ինչպես նաև դասագրքերի գիտական համապատասխանության և բովանդակային գնահատման շեմի հաղթահարման վերաբերյալ փորձագիտական հանձնաժողովների կողմից ներկայացված գրավոր եզրակացությունները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգի» 31-րդ կետի պահանջներին համապատասխան մրցութային **հանձնաժողովը ձայների 6 (վեց) կողմ 0 (զրո) դեմ հարաբերակցությամբ որոշեց՝**

1.«Հանրակրթության պետական նոր չափորոշչով» պայմանավորված 10-րդ դասարանի հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհի տրամադրման՝ նվիրաբերության պայմանագրեր.

1.1 **կարող են կնքվել** հետևյալ կազմակերպությունների հետ.

Դասագիրքը	Կազմակերպությունը	Գնառաջարկը /հազ.դրամ/
Հայ գրականություն	«Էդիթ Պրինտ» ՍՊԸ	6300,0
Հանրահաշիվ	«Էդիթ Պրինտ» ՍՊԸ	6300,0
Երկրաչափություն	«Էդիթ Պրինտ» ՍՊԸ	6300,0

	«Զանգակ-97» ՍՊԸ	6200,0
Անգլերեն	«Զանգակ-97» ՍՊԸ	6300,0
Աշխարհագրություն	«Էդիթ Պրինտ» ՍՊԸ	6300,0
Հասարակագիտություն	«Զանգակ-97» ՍՊԸ	6200,0
Ֆիզիկա	«Էդիթ Պրինտ» ՍՊԸ	6300,0
Երաժշտություն	«Էդիթ Պրինտ» ՍՊԸ	6300,0
	«Զանգակ-97» ՍՊԸ	6200,0
Կերպարվեստ	«Զանգակ-97» ՍՊԸ	5800,0
Բնագիտություն	«Էդիթ Պրինտ» ՍՊԸ	6300,0

1.2 **չեն կարող կնքվել** հետևյալ կազմակերպությունների /անձանց/ հետ.

Երկրաչափություն	«Աստղիկ գրատուն» ՍՊԸ
Քիմիա	«Անտարես» ՍՊԸ
Նախնական զինվորական պատրաստություն	«Աստղիկ գրատուն» ՍՊԸ
Կերպարվեստ	«Անտարես» ՍՊԸ

Հանձնաժողովի նախագահ՝ Արաքսիա Սվաջյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վահրամ Գասպարյան

Թամարա Սարգսյան

Ստալ Սարդարյան

Թամարա Գյոզալյան

Կարինե Բաբայան

Հանձնաժողովների քարտուղար՝ Ռուզան Սաֆարյան